գնաց յայլ ուրեք, և ես դարձայ յԱլեկսանդրայ առ ոտս աշակերտի տեառն Ոսկանայ արհիեպիսկոպոսի՝ տեառն Կարապետի վարդապետի, և ուսայ ի նմանէ զարհեստ շարաբարդութեան և մնացի ընդ վերին Ոսկանայ արհիեպիսկոպոսի և քեռորդւոյ նորա Սողոմոնի ամս չորեքտասան... և զկնի փոխելոյն նոցա առ աստուած (ընդգծումն իմն է—Հ. Դ.), և իմ տեսեալ զչարակրութիւն և զանաջողութիւն յամենայն կողմանց, վասնորոյ դիմեցի յերկիրն Հօլանդիոյ ի վայելուչ քաղաքն յԱմստելդամ...»։ Հիշյալ Կարապետ վարդապետը Անդրիանացին) Ոսկանի Լիվոռնոյում հիմնած տպարանում գործում էր 1669—1670 թվականներին։ Ուրեմն, այդ թվականներից սկսած 14 տարի՝ այսինքն մինչև 1683—84 թվականները, Մատթեոսը ծառայում է Ոսկանի և նրա քեռորդի Սողոմոնի մոտ։ Ընդգծված բառերը ցույց են տալիս, որ Մատթեոսը խոսում է ոչ թե միայն Ոսկանի, այլև Սողոմոնի վախճանված լինելու մասին[9]։ Մատթեոսը Մարսելյից տեղափոխվում է Ամստերդամ, տառեր ձուլել տալիս ու հիմնում իր սեփական տպարանը։ Թե ինչ է լինում Ոսկանի տպարանը, Մատթեոսը չի ասում։ Հավանաբար նրա գնալուց հետո է Պետրոս Ջուղայեցին ձեռնարկում դեռևս 1669-ին Ոսկանի սկսած «Շարակնոցի» տպագրության ավարտման գործին։ Այդ գրքի հիշատակարանում ասվում է. «Աւարտեցաւ տասս երաժշտական, որ և կոչի Զայնքաղ շարականոց. ի տպարանի ս. աթոռոյն Էջմիածնի և ս. Սարգսի զօրավարին և տեառն Ոսկանայ վարդապետի Երևանցւոյ հանգուցելոյ ի Քրիստոս, որ և զայս գիրքս ինքն էր սկսեր և մնացեալ էր այնպես կիս գատար (կիսակատար)։ Եւ յետոյ ես նուաստս ամենից Պետրոս Ջուղայեցի ծառայելով տեառն Ոսկանայ վարդապետի և ուսայ ի նմանէ, զարհեստ շարաբարդութեան։ Եւ սկսեցի զմնացեալն և հասուցի յաւարտ ի Հայրապետութեան տեառն Եղիազարու ամենայն Հայոց կաթուղիկոսի»։

Պետրոս Ջուղայեցու որևէ այլ տպագրություն հայտնի չէ։ Ըստ երևույթին տպարանը այդ ժամանակներում անցել է պարտատերերին, իսկ սրանցից էլ Կ. Պոլսի կաթոլիկ հայերին։

Կա տարածված մի կարծիք, ըստ որի Ոսկանի տպարանի գույքն ու տառերը, որ պարտքերի դիմաց գրավել էր մի Ամստերդամցի, 1729 թ. Մխիթար Սեբաստացին իր բարեկամ, վաճառական Հարությունի միջոցով գնել և տեղափոխել է Վենետիկ[10]։ Մխիթար Սեբաստացու կողմից Ամստերդամից հայկական տառեր ձեռք բերելու փաստի մեջ, մեր կարծիքով, շփոթություն կա։ Ըստ երևույթին նա ձեռք է բերել ոչ թե Ոսկան Երևանցու, այլ Վանանդեցիների տառերը։ Վերջիններիս տպարանը դադարել և նրանց տառերն ու գույքը պարտատերերին էր անցել 1717 թ.։ Դրանից 12 տարի հետո Մխիթարի կողմից այդ տառերը գնելը ավելի հավանական է։

Ճիշտը Թեոդիկի կարծիքն է։ Խոսելով Վանանդեցիների տպարանի 1717 թ. փակվելու մասին, նա ասում է. «12 տարի վերջ Մխիթար Սեբաստացի հայ առևտրականի մը միջոցով Նուրիջանեանց տառերու մայրերը ծախու կանել և կը փոխադրէ զանոնք Վենետիկ»[11]։

Թե ստույգ ո՞ր թվականին են կաթոլիկները հիմնել Բեգոզլի Թաղամասի իրենց տպարանը դժվար է ասել։ Այս հարցում ևս տեղեկությունների միակ աղբյուրը նրանց տպագրած գրքերի տիտղոսաթերթերում ցույց տրված տարեթվերն են։ Գ. Գալեմքյարյանը (նրան հետևելով նաև Ալպոյաճյանը) հիմնվելով կաթոլիկների 1696 թ. տպագրությունների վրա, նրանց տպարանի հիմնադրման տարեթիվը համարում են 1695 թ.[12]։ Մինչդեռ, ինչպես կտեսնենք ստորև, կաթոլիկների մեջ ծանոթ առաջին թվակիր գիրքը 1692 թ. Ամստերդամի տպագրություն ցույց տրված «Շարակնոցն» է և առայժմ այդ տպարանի հիմնադրման տարին պետք է 1691 կամ 1692 թ. համարենք, քանի դեռ ավելի հաստատ ու ստույգ թվականը չի պարզված։

Այժմ տեսնենք, թե ի՞նչ գրքեր են լույս տեսել այդ տպարանում և ովքեր են մասնակցել դրանց տպագրման և հրատարակման աշխատանքներին։

---

9 Ֆրանսիացի Օբրի դը Մոտրեյը իր ճամփորդական նոթերում (Aubry de la Motraye, Voyages, t. 1, p. 371) վկայում է, թե 1704 թ. Կ. Պոլսում հանդիպել է ոմն Սողոմոնի, որը Ֆրանսիայի դեսպանի հովանավորությամբ «ըմբոստ գրքեր էր տպագրում հայերեն լեզվով»։ Ենթադրում են, որ այդ Սողոմոնն ինքը Սողոմոն Լեհությանն է (տե՛ս Հ. Ս. Անասյան, XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1961, էջ 180—181)։ Մեր կարծիքով դա հավանական չէ։

10 Յովհ. Թորոսեան, Վարք Մխիթարայ Արբայի Սեբաստացւոյ, Վենետիկ, 1901, էջ 431—132։—Ֆ. Ե. Դուրիեզ, Հայերեն գրքերի տպագրությունը Ամստերդամում 17—18-րդ դարերում, ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1963, № 2, էջ 91—92։

11 Թէոդիկ, Տիպ ու տառ, էջ 168։

12 Գ. Գալէմքեարեան, Կենսագրութիւններ երկու հայ պատրիարքներու, էջ 84։